

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

Ներկայւմ 1894 թիւն
„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՒԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է:
«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ 10 ռ., տասն և մէկ
և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝
8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք
ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսական
1 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ԽՄԲԱԳՐԱՍՈՒՆԸ:
Օտարաբաղադրացիք պէտք է դիմեն հետեւալ
հասցէով՝ Тифлисъ. Редакция «Мшакъ», իսկ
արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՂԱՆԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ
Պարսկաստանի հայերը.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Չունենոր հիւանդ ընտանիքների հացէին. Մի
նշանաւոր նուիրատուութիւն. Նշանաւոր խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Գաղտնի հրաժարականի լուրը. Տիֆլիսում
գրաւուրդ. Նշանաւոր Պարսկաստանից. Արտաքին
լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մարդասիրական
ընկերութեան ընդհանուր ժողովը.

ՊԱՐՏԱԿԱՆՆԵՐ ԶԱՅԵՐԸ
Խօսելով Պարսկաստանի հայերի քաղա-
քակրթական միասնայի մասին, մենք խոս-
տացանք մի առանձին յօդուած նուիրել
այն հարցին, թէ քաղաքակրթական այդ
գործում ինչ դեր կարող են կատարել
հայոց թեմական առաջնորդները և տեղա-
կան հոգեւորականութիւնը:
Պարսկաստանում հայոց առաջնորդները
ոչ իբրեւ կրօնական գլուխ չեն հանդիսա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՐ
ԺՈՂՈՎԸ

Յունվարի 29-ին, երեկոյան ժամի 7½-ին, բաց-
վեց Բաղուի Մարդասիրական ընկերութեան տա-
րեկան ընդհանուր ժողովը ընկերութեան նոր չի-
նած ուսումնարանական տան շքեղ դահլիճում:
Այդ շինութիւնը և մասնաւոր դահլիճը շատ գե-
ղեցիկ տպաւորութիւն են թողնում տեսողի վրա:
Առաստաղից կան արած երեք շատ էլեքտրական
լապտերները պարզ և գեղեցիկ լոյսով ողողել
էին առաջին դահլիճը, որ խնամքով չինած, զար-
դարած, կոկած մի բան է: Կարծեմ կովկասի
մէջ սա առաջին փառաւոր տունն է, որ հայ
ընկերութեան սեփականութիւնն է: Թէ ինչպիսի
եռանդով են գործել ողբերկած շինողները, այդ
կարելի է իմանալ հէնց նրանից, որ միայն դա-
շիճի ներսի կողմի զարդարանքը 10,000 ռուբլի
փող արժէ, մի գումար, որ շատ բաւական
կը լինէր մի ուրիշ տեղ մի լաւ դպրոցական չի-
նութիւն կանգնեցնելու:

Ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց պ. Խ.
Անտոնեան, իսկ քարտուղար—պ. Ն. Դաւթեան:
Նախագահը յայտարարեց, որ նորերումս վախ-
ձանովել է ընկերութեան անփոփոխ անդամ Յովա-
կիմ Աղամեան, որը կտակել է ընկերութեան մօտ
25 հազար ռուբլի և առաջարկեց ոտքի կանգնե-
լով՝ յարգել հանգուցեալի յիշատակը: Ժողովը կա-
տարեց այդ առաջարկութիւնը և համաձայնվեց
յունվարի 30-ին ներկայ լինել հոգեհանգստին,
որ պէտք է կատարել տայ ընկերութեան խոր-

նում: Նրանք մի և նոյն ժամանակ եջ-
միածնի կաթողիկոսի ներկայացուցիչ են
պարսից Գրան մօտ և հայ ժողովըր-
դի կառավարիչ ու նրա մասին պա-
տահանատու կառավարութեան առաջ:
Այդ պատճառով հայոց առաջնորդների
յարաբերութիւնը պարսից կառավարու-
թեան հետ կատարվում է հիւպատոսների
և դեսպանների նման արտաքին գործերի
միջնորդութեան միջոցով և հայերը Պարս-
կաստանում ուղղակի ենթակայ են արտա-
քին գործերի միջնորդի իրաւասութեան:
Ճիշդ է, հայերի և առհասարակ հպա-
տակ քրիստոնեաների կառավարութեան
համար նշանակվում են սարգիստա-
նէր, նոյն իսկ քրիստոնեաներից սովորա-
բար (թէ և լինում են և մահմետական
խաներ ժողովրդի համաձայնութեամբ),
բայց զարմեալ ժողովրդի անմիջական կա-
ռավարութեան, հարկատուութեան, հար-
կահանութեան և այլ այսպիսի խնդիրների
կարգադրութիւն ու լուծումը առանց ա-
ռաջնորդի միջամտութեան չէ լինում:
Հայոց առաջնորդները մինչև անգամ
դատաստանական իրաւասութիւն են գոր-
ծադրում: Քաղաքայինական, կալուածական
գանազան վէճեր ըստ սովորութեան պէտք
է ենթարկվել շարիաթի վճիռին, բայց եթէ
վիճողները երկուսն էլ հայեր են, նրանք
կարող են դիմել առաջնորդին և առաջնոր-
դին թողարկում է միշտ, ըստ նախա-
ւանդ սովորութեան, քննել դատը և իր
վճիռն արձակել: Այդ վճիռը ընդունելի է
բոլոր ատենաներում:
Այն քաղաքներում ու գիւղերում, որ-
տեղ փոխանորդներ կամ աւագ քահանաներ
կան, նրանք նոյն կոչումն ունեն և նոյն դերն
են կատարում, ինչ որ առաջնորդը, իբրեւ
նրա ներկայացուցիչներ:
Կարողական գործերում ամենամեծ հե-
ղինակութիւնը և ինքնիշխանութիւնը պատկա-
նում է զարմեալ առաջնորդներին:
Նրկար, բարոյական թմրութեան ենթարկ-

հորդը: Ապա սկսվում է հաշի քննութիւնը:
Խորհուրդը մի օր առաջ ընկերութեան անդամնե-
րին բաժանել էր անցեալ 1893 թ. դրական
հաշիւը, ուստի նախագահի առաջարկութեամբ
այլ ևս աւելորդ համարվեց քննել այդ հաշիւը,
որը մի քանի ձայներով (ըստ հայկականին—միա-
ձայն) հաստատվեց:
Թէ և անդամները բաւականացան տպագրած
թուանշաններին նայելով, բայց աւելորդ չի լինի
եթէ գտնէ ժողովից յետոյ յիշեցնվի ընկերութեան
վարչներին, որ այսքան ելք և այլքան մուտք
ցոյց տուող աղիւսակը շատ հեռու է հետաքրք-
րութեան բաւականութիւն տալու հանգամանքից:
Թուանշանները հարկւր լեզու ունեն և առանց
էական բացատրութիւնների մոլթ են մնում, մա-
նուանդ երբ նրանք մտցնում են հին խալի-
ֆայական շահիւնների մէջ: Միթէ աւելորդ է հա-
մարվում արտաքինների խնդրող օղակներից ա-
նկալել և հասկացնել հասարակութեան, թէ ինչ
է արել ընկերութիւնը, ինչ միջոցների է դիմել
իր կանոնադրութեան կէտերը կատարելու համար:
Հաշիւը միայն թուանշանների խաղը չը պէտք
է պատկերացնել, այլ և պէտք է հում նիւթ դառ-
նայ պատմութեան համար: Կովկասի Բարեգոր-
ծական ընկերութիւնը անցեալ տարի հրատարա-
կեց մի հաշիւ, որի մէջ փաստեր էլ կան, թէ և
ոչ բաւական չափով—տեսեցէ, ինչպէս, ինչ վատ
բան արւաւ:
Խորհրդի գործունէութեան հաշիւը կարգաց
խորհրդի քարտուղարը: Այդ երկար ընթերցանու-
թիւնը տպած. հաշիւ առաջացրած տպաւորու-
թիւնը միանգամից հաստատեց, պնդացրեց. այն
է, որ Բաղուի Մարդասիրական ընկերութիւնը
բացի դպրոցական աշխարհից, չէ ձանաչում մի
այլ շրջան, ուր կարելի լինէր մարդասիրութիւն

ված ժողովուրդը շատ դժուարութեամբ է
ձեռնարկում մի որ և է գործի, եթէ ա-
ռաջին օրինակը չէ տալիս առաջնորդը:
Նա սովոր է ամեն փոքր ի շատէ կարեւոր
խնդրում առաջնորդի կարծիքն իմանալ և
նրա հրահանգը լսել:
Եղել են առաջնորդներ, որոնք միահե-
ծան կերպով վարել են իրանց պաշտօնը,
ինչպէս հանգուցեալ Ստեփան եպիսկոպոս
Մխիթարեանը և աշխատել են հեռացնել
ժողովրդին գործերի մասնակցութիւնից,
բայց եղել են և այնպիսի առաջնորդներ,
ինչպէս հանգուցեալ Սահակեան, Անդրէաս
և Մուշեղեան եպիսկոպոսները, որոնք ճշգ-
նել են ժողովրդին աւելի ներգործական
դեր տալ և ներշնչել նրանց մէջ ինքնա-
գործունէութեան եռանդը:
Իսկ կաթողիկ և բողոքական քարոզու-
թեան դէմ պայքար մղելու ամբողջ գործը
և ներկութիւնը միշտ ծանրացած է եղել ա-
ռաջնորդների վրա և այդ պարագայում
ժողովուրդը ամեն ձեռնարկութիւն սպասել
է առաջնորդից:
Հիմնովի է որ և է մի դպրոց, հաստատ-
վել է որ և է մի ընթերցարան, այդ ա-
մենը միշտ կատարվել է առաջնորդի մա-
նակցութեամբ և անմիջական ղեկավարու-
թեամբ:
Մի խօսքով Պարսկաստանի հայ ժողո-
վրդի մտաւոր, հոգեւոր և նոյն իսկ քաղա-
քայինական ու նիւթական զարգացման
գործում, լաւ թէ վատ, առաջնակարգ տեղ
են բռնել առաջնորդները և դեռ ևս պէտք
է բռնեն, տեղական և պատմական պայ-
մաններէ շնորհով:
Արժեւն, անձուէր, եռանդուն անկա-
շատ, ազնիւ առաջնորդը, իբրեւ կրօնապետ,
իբրեւ քրիստոնէական քաղաքակրթութեան
ներկայացուցիչ մեծ դեր կարող է խա-
ղայ ոչ միայն հայ, այլ և ուրիշ քրիս-
տոնեայ աղբիւրի ասորիների, յակոբեան-
ների և նոյն իսկ պարսիկ ժողովրդի մէջ:
Հարկաւոր է միայն, որ առաջնորդը լինի

անկւ: Եւ առհասարակ շատ էլ բարդ չէ ընկե-
րութեան գործը. ունենալով այժմ 62,540 ռ. 95
կոպ. անձնակազմի մայր գումար, նա ստանում
է տարին 6 հազար ռուբլուց աւելի փող, վարձ
չինութիւններից, տարեկան անդամներից 205
րուբլի և սուղ և 13 դպրոցների ընդհանուր
աւժամբ 4695 ռ. (որոնցից 3000 ռ. Բաղուի
դպրոցներին, այնպէս որ մնացած 12 դպրոցնե-
րին միջին թւով գալիս է տարեկան 141 ռ. փող)
և դրանով հաստ գիծ է քաշում իր գործունէու-
թեան տակ: Նկատեցէք, որ այն ընկերութիւնը,
որի անուան մէջ կայ «մարդասիրական» բառը,
տարեկան 5 ռուբլի չէ բաժանում աղքատներին:
Այս րուբլին Բաղուի մէջ տարածված է դիֆտե-
րիա, որ գլխաւորապէս, ի հարկէ, աղքատ դա-
սակարգի մէջ է ալ ու ձախ հնձում, իսկ ընկե-
րութեան կանոնադրութեան մէջ մեռած են մնա-
ցել «հիւանդներին ձրի բժշկել» բառերը: Ինչպէս
երեւում է, մեր մէջ դեռ չէ հասկացվել այն
պարզ միտքը, որ կրթութիւնից առաջ հարկաւոր
է առողջ սերունդը: Եւ հէնց այդ է պատճառը,
որ ընկերութեան խորհուրդը, տալով, օրինակ,
Բէզար-Քեանդի դպրոցին տարեկան նպաստ 75
րուբլի, կարծում է թէ դրանով լուսաւորութեան
տարածմանն է նպաստում: Թող տուէք սակ ձեզ
մի հասարակ, նոյն իսկ մշակած ճշմարտութիւն.
այնքան ողորմելի, հանաք բան չէ ուսման գործը,
որ ձեր 75 ռուբլով կենդանանայ: Պահեցէք մի
ուսումնարան, մի լաւ, օրինակելի ուսումնարան
և դա հարկւր անգամ լաւ կը լինի, քան ամսական
6 ռուբլի տալը մի ողորմելի, կէս-կուշտ և կէս-
քաղցած դուրսի շնորհալու համար:
Առաւելական ցնեղ ստանալ ցանկացողներին
խորհուրդը նշանակել է նպաստ 600 ռուբլի, բայց
ձախովել է 420 ռ. այդ նպատակով հինգ հոգի

գործին նուիրված, իսկ ի տէր, ազնիւ,
չիտակ և անխաբախ մարդ:
Հաստատել թեմի գանազան կողմերում
և անկիւններում ծխական-ժողովրդական
դպրոցներ, հիմնարկել գրատուն-ընթերցա-
րաններ, ձեռնադրել արժանաւոր և կրթված
քահանայ-ուսուցիչներ, աշխատել գլուխ
բերել կենտրոնական միջնակարգ հանրակը-
թական ուսումնարանի բացումը, հայ և
օտար քրիստոնէական տարրերի մէջ միու-
թեան, համերաշխ գործունէութեան գա-
ղափարը քարդացնել, հայ ժողովրդի և
պարսիկների մէջ սիրոյ, եղբայրակցութեան
սերմերը տարածել,—հաշիւն զեր ունի կա-
տարելու Պարսկաստանում հայոց առաջ-
նորդը:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՉՈՒՆԵՆՈՐ ՀԻՄՆԻ ԸՆԴՏԱՆԻՐՆԵՐԻՆ
Այժմ մեր քաղաքում բաւական տարածված են
դանազան տարափոխի մանկական հիւանդու-
թիւններ, ինչպէս են՝ քութէշ, կարմրուկ, դիֆ-
տերիա: Կարմրուկը բարեբաղդաբար թեթեւ է
անցնում, իսկ քութէշն ու դիֆտերիան մեծ գո-
հեր են տանում:
Ժողովրդի մէջ արմատացած է մի վերին առ-
տիճանի անմիտ և մի և նոյն ժամանակ փրատա-
կար նախապաշարմունք, թէ այս հիւանդութիւն-
ները սրբերի աւուած են և ուրեմն չէ կարելի
նրանց դէմ ոչ մի միջոց գործ դնել: Այս հիման
վրա ժողովուրդը ոչ բժշկի է դիմում, ոչ իր հի-
ւանդ երեխային առանձնացնում, միւս երեխանե-
րին վարակումից փրկելու համար, և ոչ արտա-
հանել է տալիս հիւանդի իրերը և սենեակը: Սրա
հետեանքը լինում է այն, որ մի գերդաստանի
բոլոր երեխաները հիւանդանում են մէկի պատ-
ճառով և նրանցից չափերը դո՛ւ են գնում իրանց
ծնողների անհոգութեան և աղէտութեանը:
Այսօր թիֆլիսի մէջ գոյութիւն ունի մի լաւ
ցնեղ են ձեռք բերել Նկատելի է, որ մեր բարե-
գործական ընկերութիւնները աւելի շատ են մտա-
ծում այդ կարեւոր խնդրի մասին, քան իրանք,
ուսուցիչները Մի այնպիսի վերին աստիճանի
համակրելի գործ, որպիսին է մեր ընկերութիւն-
ների այս կերպ օգնութիւնը, զարմեալ չէ հաս-
նում իր նպատակին ցանկալի չափերով, ապա-
ցոյց հէնց այն, որ նշանակած դուրսբեր մնացել
է 180 ռուբլի, ցանկացողները չը լինելու պատ-
ճառով: Ի՞նչ են մտածում մեր ուսուցիչները:
1893 թ. խորհուրդը վճռել է բաց անել իրա-
կան արհեստագիտական դպրոց, մի հիմնարկու-
թիւն, որ արժանի է ամեն մէկի համակրութեան:
Ցարաքաղաքային այդ գեղեցիկ միտքը մնացել
է առանց գործադրութեան, չը գտնելով պատ-
ճառը իշխանութեան կողմից հաստատութիւն:
Ընկերութեան նոր շինութիւնը, որի մէջ այժմ
գետեղված են ծխական երկու սեռի դպրոցները,
աւարտվել է, թողնելով պարզ 25 հազար ռուբ-
լի, բացի դրանից պակասութիւնները լրացնելու
համար պահանջվում է մօտ 5 հազար, այնպէս
որ մինչև այժմ ծախսելով այդ շինութեան վրա
111,397 ռ., ընկերութիւնը դեռ ունի վճարելու
30 հազար ռ.: Նախագահը յայտնում է, որ այդ
շինութիւնը գլուխ է կելել պ. Պողոս Ղուկա-
սեանցի եռանդուն աշխատութեամբ և առաջար-
կում է շնորհակալութիւն յայտնել պարոնին: Խա-
կոյն կազմվում է հեռագիր, որով ընկերութիւնը
իր շնորհակալութիւնն է յայտնում պ. Ղուկա-
սեանցին, որն այժմ Պետերբուրգ է գտնվում:
Նշանակէ շնորհակալութիւն է յայտնվում խոր-
հրդին, որը մի այնպիսի խոշոր գումար է հաւա-
քել այդ շինութիւնը կառուցանելու համար:
Չը մոռանալով յիշատակել ընկերութեան մի
այլ համակրելի հիմնարկութիւն—գրադարանը:

կազմակերպված սանիտար-բժշկական մարմին՝ աղքատ ընտանիքների համար: Իսրայելյան թաղում ապրում է մի բժիշկ, որը ունի ստանալով քաղաքից՝ պարտաւոր է ձրի բժշկական օգնություն հասցնել չունեողներին, մատակարարելով նոյնպէս ձրիաբար, անհրաժեշտ դեղեր, ակտահանելով վարակված տները և իրերը նոյն պէս ձրի և այլն: Այս բժիշկների ազգանունները արգելված են և յայտարարված, բայց ժողովուրդը դեռ չը գիտէ: Աստի «Մշակի» խմբագրութիւնը հարկաւոր համարեց նրանց ազգանունները և հասցէները տպագրել լրագրի յայտարարութիւնների բաժնում, թէ այսօր և թէ մի քանի անգամ չարունակ, որպէս զի ցանկացողները կարողանան օգտուի:

Այդ բժիշկներին ամեն օր և ամեն ժամ կարող են գիտնել աղքատ հիւանդները, առանց քաշվել ու և նրանց աղքատ երեխաները կը ստանան կանոնաւոր բժշկական խնամք և դեղեր, կրկնում ենք, բ ու ու ու վ ի ն ձ ը ի:

Ինչու չեն օգտուում:

Բժշկական վ. Արծրունի

ՆՇԱՆԱՌՈՐ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Նորերումս յայտնի հայ հարուստ գրամատէր Ստեփան Լիանոզով մի նշանաւոր նուէր է արել Աստրախան քաղաքին: Այդ նուէրը կայանում է նրանում, որ նա յանձն է առել հայկաթիւն քաղաքին մաքուր, առողջարար և առատ ջուր, պեղելով և մաքրելով Աստրախանի երեք ջրանցքները, մի գործ, որի համար պէտք է առնուազն 300,000 ռուբլի փող:

Այդ առիթով ուղղվելով մի նամակ դուժային, Լիանոզովն ասում է. «Յանկանալով թողնել իբրև յիշատակ ինձ համար մայրենի քաղաք դարձած Աստրախանին մի բարի գործ, ես կը ցանկայի իրաւորեմ իրաւաւոր զաւթաւորաւոր նուիրական ցանկութիւնը, մի և նոյն ժամանակ քաղաքի աղքատ գաւազանի համար նուիրական օգնութեան մի մշտական աղբիւր հաստատել: Այդ ընդհանուր ցանկութիւնն է—վարկացեան ջրը՝ ընդհանուր, կուտում գետի և Աղմիրալտէյսկի ձոցի պէն դուռը»:

Եւ մի առ մի թելով եկամտի աճագին աղբիւրները, որոնք քաղաքին կարող են տարեկան տասնեակ հազարներ տալ, Լիանոզով յայտնում է, որ ինքն կը հոգայ ծախսը, որը 300,000 ռուբլուց պակաս չէ, միայն այն պայմանով, որ այդ շինութիւնից առաջ զալիք եկամտի նոր աղբիւրներով կազմվի մի բարեգործական ֆոնդ, որը պէտք

կարողացնէ և գրադարանի գրամական հաշիւը, որից երեսուց հետեւան. գրադարանը այժմ ունի 6000-ից աւելի հատոր գրքեր և նրա ամբողջ կաշիքը արժէ 10 հազար ռուբլի: Յաւուր ենք, որ այդքանով բաւականացաւ հաշիւը. մենք կը կամենայինք աւելի մանրամասն տեղեկութիւն ունենալ գրադարանի գործունէութեան մասին. պէտք էր տալ վիճակագրական տեղեկութիւններ նրա կատարած գործի մասին, և այդ շատ հետաքրքրական և նոյն իսկ խրատական կը լինէր: Բացի դրանից, այդպիսի տեղեկութիւնները պէտք է աշխատել տարածել հասարակութեան մէջ, ուստի հարկաւոր էր տպագրել:

Հաշիւ ընթերցումից յետոյ զեկուցանվում է ժողովին, որ 26 ուսանողներ և ուսումնարանական հաստատութիւններ նպաստ են խնդրում խորհրդից: Այդ խնդրանքներից խորհուրդը ընդունել է միայն երկուսը—Շամախու թեմական առաջնորդի խնդրը՝ երկու գիւղական դպրոցին օգնելու մասին, իսկ մնացած խնդիրները մնում են երեսի վրա ընկած: Առաջնորդը ներկայ էր ժողովին. երբ խորհրդի այդ վճիռը լուծեցանք ընդունվեց, նա վերկայացու և գնաց:

Ապա քննվում է 1894 թ. համար կազմած նախահաշիւը: Խորհուրդը, երևի ինքն էլ զգալով, որ չափազանց միակողմանի գործունէութեան եղանակին է հետեւում, մի նորութիւն հաղորդեց ժողովին՝ այն է, որ հայոց գրականութիւնը ծաղկեցնելու համար նա նշանակում է և բրկու հարիւր ռուբլի: Այդ առաջարկը բաւական տաք վիճաբանութիւն է պատճառում: Շատերը նկատում են այն պարզ հանգամանքը, որ այդպիսի գումարով գրականութիւն չի ծաղկի և առաջարկում են 200 ռ. աւելացնել մի ուրիշ նպատակի վրա: Խորհրդի անդամներից մէկը բա-

ն էր իր հետեւել անունը. «Ստեփան Մարտինի Լիանոզովի բարեգործական ֆոնդ», և այդ ֆոնդի միջոցներով բացվին և պահպանվին Աստրախանում հետեւել բարեգործական և մարդասիրական հիմնարկութիւնները. 1) Աստրախան քաղաքում հիմնվի աշխատասիրութեան տուն (Домъ трудолюбиваго), 2) Աստրախանի մի աղքատ թաղում կանոն և երեխաների համար հիմնվի գիշերելու տուն, 3) Աստրախանի բանտերում իրանց պատիժը կրող յանցաւորների երեխաների համար ժամանակաւոր մի ապաստարան, 4) քաղաքի հաշիւով պահվող մանկական հիւանդանոցին աւելի լայն ծաւալ տալ, 5) աչքի բուժարանում երեք նոր մահահալ պահել, 6) շուտով բացվելի մանկական վարակիչ հիւանդանոցներում երկու նոր մահահալ պահել, 7) քաղաքային ծննդաբերական տան մէջ երկու մահահալ պահել, 8) ժողովրդական դաստիարակութիւնների մշտական կոմիտէ հաստատել, 9) երկու տարին մի անգամ պրէմիա սահմանել երեք ամենալաւ հեղինակութիւնների համար՝ Աստրախան քաղաքի բարեկարգութեան, վաճառականութեան և արդիւնաբերութեան զարգացման վերաբերելով:

Այսպիսի մի նշանաւոր նուէր մեծ ուրախութիւն է պատճառել Աստրախան քաղաքին, ուստի և դուժային որոշել է իր ամբողջ կազմակերպութեամբ ներկայանալ Լիանոզովին և չնորհակալութիւն յայտնել իբրև քաղաքի բարեբարին:

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՎՈՐԹԻՒՆ

Թիֆլիս 23 յունվարի

«Մշակի» № 7-ի մէջ մեծ հետաքրքրութեամբ կարդացի բժիշկ պ. վ. Արծրունի «Գաղափարական առողջապահութիւն» խորագրով յօդուածը: Յուսանք, որ այդ կը լինի մեր դպրոցական հոգաբարձութիւնների համար մի խթան, որով կը միջն իրանց պարտաւորութիւնները դէպի դպրոցի առողջապահական պայմանները և չեն ստիպի թեմական տեսչին ամեն անգամ յուշ անելու: Այդ յօդուածի այն կէտը շատ զորանք պատճառեց, որով նկատում եմ թեմական տեսչներին, թէ ժամանակ է արդէն գտնել հետաքրքրութիւն ունենալ կարողաւ տարրական ձեռնարկներ այդ կարեւոր խնդրի մասին: Եթ թաղաքաւոր—գրում է պ. բժիշկը—մինչև այժմ թեմական տեսչները մի անհամակալի անտարբերութիւնով են վերաբերվել դէպի այս հիմնաւոր խնդրը»:

Միթէ, պ. Արծրունի, դուք ես մի միտք, հէնց ասենք մի նորութիւն, յայտնել չէք կարող առանց

կսում է պաշտպանել առաջարկը, յայտնում է որ այդ նորութիւնը չէ կարող իբրև աւելորդութիւն մտած գործել այս տարվայ նախահաշիւի մէջ: Այո, դուք ե և աւելորդ չը լինի, բայց այդ քիչ ինքնախաբուծիւն է կարծիք թէ ձեր 200 ռուբլին պէտք է ծաղկեցնէ գրականութիւնը: Կարող էք ասել, թէ 200 ռուբլին ողորմութիւն պէտք է տալ մի որ և է հայ գրագէտին և այդպիսով դուք յաջողաբար գործած կը լինէք. չէ որ 75 ռուբլով օգնութիւն էք տալիս մի դպրոցին: Եթ է հանկանում էք, որ 75 ռուբլով լուսաւորութեան գործին չօշտելի օգնութիւն չէք տալիս, պէտք է հակառակը և այն, որ 200 ռուբլով գրականութիւն ծաղկեցնելու առնուազն միամտութիւն է: Այդ հարցը վերջական լուծում չը ստացաւ. պարզ էր, որ ժողովի մեծամասնութիւնը բոլորովին անտարբեր է մնում դէպի մի այդպիսի անմեղ մոլորութիւնը:

Նախահաշիւով ուսուցչական իրաւունք ձեռք բերել ցանկացողներին նշանակած 600 ռուբլի նպաստը ժողովը քիչ համարելով, 1000 ռուբլի չինքն: Շատ ցանկալի է, որ գտնէ այժմ այդ գումարը ամբողջութեամբ գործադրվի և մեր ուսուցչներին շատերը օգուտ քաղեն ընկերութեան այդ բարեկարգութիւնից:

Նախահաշիւի մնացած կէտերը շարժական կնիք էին կրում. ուսումնարանների մի երկար թիւ, ամեն մէկին 75—200 ռ. նպաստ և գործը վերջացաւ: Խորհուրդը իր սպասած մտաքից 1,200 ռուբլու խնայողութիւն կունենայ: Նախագահը առաջարկում է այդ գումարը թողնել խորհրդի իրաւունքին, որ նա նպատակներ տալ 24 զանազան խնդրատուներին, որոնց մասին վերև յիշեցինք: Բայց այստեղ սխալում են հակաձայնութիւններ: Պ. Ն. Արքեան յայտնում է, որ

ուրիշներին վերաւորելու: Գուք հրապարակել թէ թեմական տեսչները անտարբեր են դէպի այդ խնդիրը: Հէնց այն մանրամասն տեղեկութիւնները, որ ես կրեմանի թեմում, իմ նախորդն այս թեմում, իբրև թեմական տեսչներ, պահանջել ենք մեր առաջ-ուսուցչի ներքին դպրոցական չէքերի և առողջապահական պայմանների մասին, ապացուց է, որ անհամակալի անտարբերութիւնով չէք վերաբերվել դէպի այդ խնդիրը: Նկատողութիւններ գրելուց առաջ, եթէ ներքին քաշէիք, տեսչական գործերի հետ ծանոթանայիք, ձեր յօդուածը ի դուր տեղը անձնատրութիւնների վերաւորելու թերութիւնը չէր ունենալ: Իսկ եթէ մեր գործ դրած միջոցները դպրոցական չէքերը չեն բարելաւել, առողջապահական պայմանները չեն բարելաւել, պատճառը միայն ու միայն մեր ձեռքերի տակ պատրաստի հարուստ գանձարաններ չը լինեն է մի կողմից, մեր դպրոցական հոգաբարձուների չափազանց պարտաճանաչ և գործունեայ լինելն է միւս կողմից: Գեռ չը թեմը շատ այլ հանգամանքներ, որ վեր են թէ տեսչի և թէ հոգաբարձուի ուժերից ու իրաւունքներից:

Ես նոյն իսկ ապացուցում եմ համարել նկատել, յուշ անել դպրոցի առողջապահական խնայողական պայմանների մասին այն հոգաբարձութեանը, որ բացակայած է նոյն իսկ բժիշկ պ. վ. Արծրունուց և իր նման առողջապահական պայմանները բաշ հասկացող յարգելի անձինքներից: Ես չեմ նկատել, յուշ անել հաւատացած լինելով, որ հոգաբարձութեան գտնէ բժիշկ-անգամը խնայողութիւն կերպով կը հոգայ. բայց տարբարաւորաւոր այս իմ վերաբերմանը բժ. Արծրունին անտարբերութեան է վերաբերել: Յաւալի է: Սակայն պ. բժիշկ-հոգաբարձուի յօդուածը կարգաւոր և այստեղ իր պարտաւորութիւնները իրան մտաբերելուց յետոյ, ուրախութեամբ համակվում է սիրտս այն միտքով, որ թեմական տեսչին, որ պ. Արծրունին, իբր բժիշկ՝ դպրոցների առողջապահական պայմանների մասին լրագրով հաստատակցուց յետոյ, իբրև հոգաբարձու ձգտուէի կրիական երկու սեւի դպրոցները՝ օրինակով և կապացուցի իր ծրագրած առողջապահական պայմաններին համապատասխանող չէք կառուցանելով, յարմարութիւններ տալով, այժման դպրոցի չէքեր ու յարմարութիւն թշուառութեան փոխանակ: Չէ որ դուք, պ. Արծրունի, և բժիշկ էք և հոգաբարձու:

Յարգանք խնդրում եմ «Մշակի» խմբագրութիւնից տեղ շնորհել իմ այս նամակին:

Թեմական տեսուչ՝ Մ. ք. Միլեան

Ընկերութեան մուտքի մեծ մասը ծախսվում է բազուի ծխական դպրոցների պահպանութեան համար. Բազուի պէս մի փարթալ, շուայ քաղաքի համար ամօթ պիտի լինի, եթէ նա առանց ընկերութեան աջակցութեան չէ կարողանում երկու հատ ծխական դպրոց պահել: Գաղափարների հոգաբարձութիւնը, ինչպէս յայտնվեց ժողովում, ամենաբարձունքին է հայ հոգաբարձութիւնների մէջ. նա ոչ ցանկում է, ոչ մշակում, բայց հնձում է. նպաստ է ստանում ընկերութիւնից 3,000 ռուբլի, նպաստ է ստանում եկեղեցուց և այդ գումարների վրա աւելացնելով ուսման վճարը, պահում է դպրոցները: Ուրիշ աշխատութիւն, հոգս չունի հոգաբարձութիւնը: Բայց միթէ նա չէ կարող ստեղծել ուրիշ միջոցներ և պահպանել դպրոցը առանց այդ օժանդակութեան: Այդ առարկութիւնը շատերի կողմից ընդունվում է համակրութեամբ. իսկ մէկը նկատում է, թէ այդ խնդրն է, որ հաղաբարձութիւնը հետեւ տեղերից նպաստ են խնդրում Բազուից դպրոց պահպանելու համար, իսկ Բազուն չէ կարողանում իր սեփական դպրոցները ապահովել: Խորհուրդը բացատրում է, որ եթէ այդ նպատակը չը տրվի, դպրոցները չեն կրող կառավարվել, որովհետեւ ժողովուրդը փող չի տալ, կասէ ստացել Մարգարիտական ընկերութիւնից: Երկար վիճաբանութիւններից յետոյ նախագահը առաջարկում է մի այսպիսի բանաձև. այս տարի էլ տալ 3 հազար ռուբլի, իսկ եկող տարվանից սկսել 200-ական ռուբլի պակասեցնել գումարից, որպէս զի հոգաբարձութիւնը հնազանդ է, կամայկամայ սովորէ իր համար միջոցներ գտնել: Շատերը յայտնում են, որ 200 ռուբլին շատ է քիչ, պէտք է 500-ով պակասեցնել: Հարցը այդպէս էլ մնում է, վերջական վճիռ չը ստանալով:

Ապա երկար վիճաբանութիւններ են սկսվում

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԿՆԻ

Կիրակի, յունվարի 30-ին, պատարագից յետոյ, Սուրենեան եպիսկոպոսը ամբողջ հայ հոգաբարձաւորութեան մասնակցութեամբ, վանքի մայր եկեղեցում գոհացողական մողթանք կատարեց Թագաւոր Կայսրի առողջանալու պատճառով: Մողթանքին ներկայ էին բազմաթիւ աղօթողներ:

Մեղ գրում են Թագաւորից, որ պարսից կառավարութիւնը վերջնականապէս որոշել է Պարսկաստանում բնակվող հայ արհեստաւորներից առաջ առնել:

Կ. Պոլսից հաղորդում են «НОВОСТИ» լրագրին. «Բոլորովին սխալ է այն լուրը, որ իբր թէ ամերիկական ղեկավարությունը յանձնել է օսմանեան կառավարութեան փոքր-Ասիայի հայերի խնդրադրել: Ինչ վերաբերում է «Standart» լրագրին այն լուրին, թէ սըր Ֆիլիպ Կերրին յանձնարարութիւն է ստացել հայկական խնդրի մասին ղեկուցում անելու Բարձր Գրան, — դեռ ոչինչ յայտնի չէ: Անգլիական նոր դեսպանը դեռ չէ եկել և օսմանեան կառավարութիւնը տեղեկութիւն չունի այդ տեսակ յանձնարարութեան մասին: Բայց եթէ այդ լուրը ճիշդ էլ լինի, Բ. Գուրը անգլիական ղեկավարի առաջադրութիւններին առանձին նշանակութիւն չի տալ, չորհիւ այն անտարբերութեան, որ ցոյց է տալիս դէպի այդ խնդիրը Ռուսաստանը»:

Փետրվարի 1-ին կայացաւ Կայսերական կողմի կասեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստը, որ զբաղվեց 1894 թ-ի նախահաշիւ քննութեամբ: Նիստի վերջում փոխ-նախագահը յայտնեց, որ նա մտադիր է թողնել իր պաշտօնն այն պատճառով, որ բաւականաչափ ժամանակ չունի զբաղվելու ընկերութեան գործերով և առաջարկեց ի նկատի ունենալ մի կանգիդատ փոխ-նախագահի պաշտօնի համար, որը պէտք է ընտրվի փետրվարի վերջին կայանալիք նիստում: Ժողովականները յայտնեցին իրանց չորհակալութիւնը այժմեան փոխ-նախագահ պ. Շիմանովսկուն՝ նրա միամտայ գործունէութեան համար:

Կովկասեան կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերմետեվ, կարդում ենք «С.-Петербург. Вѣд.» լրագրում, շուտով Թիֆլիս կը վերադառնայ: Ներկայումս նա հարց է զարթեցրել Անդրկովկասում երկաթուղային գծերի մէկ ամբողջ ցանց շինելու և հողի մէկ աճագին հրապարակ ուղղելու մասին թիւրքաց սահմանի վրա:

մի այլ եսկան հարցի մասին: Ժողովականներից պ. Վաչան յայտնում է, որ ընկերութիւնը պէտք է, վերջապէս, ընթերցելի կեանքի պահանջներն էլ ի նկատի ունենայ: Երկար ձառեր են խօսվում. հասկացնել են ուղում, որ բարեգործութիւնը նպատակ ընդունած հիմնարկութիւնը չը պիտի քնած մնայ ժողովրդական աղետի ժամանակ, ինչպէս քնած մնաց խօսքայի ժամանակ:

Այնուհետև կարդացվեց որդեգիրներին օգնութիւն անելու համար կտակած գումարների հաշիւը. բայց ժողովը վճիռներ կայացնելու էլ գործ չունէր: Կանոնաւոր քուէարկութիւն չը կար, մէկ կամ երկուսի ձայնը համարվում էր միաձայն վճիռ. սկզբից մինչև վերջը ժողովում տիրում էր «կազալայի» կարգը, այդ առնուազը պատիւ չէր բերում զանվճիռ ելեքարական լապտերներին. յայտնի է գտնէ որ «կազալայի» աշխարհը այդպիսի լոյսերից միշտ խռով է մնում:

Ժամի 10¹/₂ ին փակվեց ժողովը: Միւս օրը, 30-ին, տեղի ունեցաւ ժողովի շարունակութիւնը ընտրութիւնների համար:

Առաջիկայ եռամեակի համար ընտրվեցին միաձայն, առանց քուէարկութեան, խորհրդի նախագահ՝ պ. Գրիգոր Թուրանեան, անդամ-քանձապահ՝ պ. Մ. Արքեան և անդամ-ատենադպիր՝ պ. Ա. Գալստեան: Ապա քուէարկվեցին միւս անդամները: Խորհրդի անդամներ ընտրվեցին՝ պ. պ. Գր. Ասլանեան, Գր. Դիլբարեան, Սամ. Բաղիրեան, Հ. Գուկասեան, Աղ. Ասրիբէկեան և Ն. Արքեան: Ընտրութիւններով էլ աւարտվեցին ընդհանուր ժողովի պարագայունքները:

Լ.

Թիֆլիսի քաղաքային դումայի նորընտիր քաղաքապետը պ. Լիսիցեանին չէ հաստատել այդ պաշտօնում Թիֆլիսի հասանցիկ կառավարիչ կոմս Տիգլանաուզին և առաջարկել է դումայի քաղաքապետի նոր ընտրութիւն կատարել՝ համաձայն քաղաքային կանոնադրութեան 119 յօդուածի:

Քաղաքի քաղաքային վարչութեան նորընտիր անդամները՝ Սափարով, Օրոշ-Ալիբեկով և Ասրի-բեկով, «Каспий» լրագրի խօսքերով, չեն հաստատում իրանց պաշտօններում, այդ պատճառով նոր ընտրութիւններ կը լինեն՝ Իրեքկուն քաղաքային պաշտօնի մէջ հաստատուող յետոյ:

Յօդուած Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքներ թագադրութեան ստացանք. 1) Սարունչից, Կարապետ Տ. Յովհաննիսեանի միջոցով, Տէր-Յովհաննիսեանի նախագահի գործակալութեան հանգանակած, 6 ռուբլի. 2) Ախալքալաքից, Արշակ Գրիգորեանից՝ 4 ռ. (մնաց. բաժնի). 3) Նոր-Նախիջևանից, Յակոբ քահանայ Նախաջանից՝ 1 ռուբլի: Ուրեմն նախկին 2015 ռուբլի 16 կոպէկի հետ այժմ ունենք 2026 ռուբլի 16 կոպէկ:

Մայրաքաղաքի լրագիրների խօսքերով, բարձրագոյն և միջնակարգ դպրոցների ուսուցիչները, որոնք գիտական նպատակով ճանապարհորդութիւն կը կատարեն Ռուսաստանում, ներկայ տարւոյում արտօնված տոմսակներ կը ստանան՝ երկաթուղիներով և շրջանաւերով ճանապարհորդելու համար:

Չմիւսնիայի հայոց ընթերցարան-մատենադարանը հրատարակել է իր տեղեկագիրը 1893 թւականի համար: Այդ ընթերցարանը հաստատված է 1869-ին և բաղկացած է երկու մասից՝ բուն ընթերցարանից և մատենադարանից: Տարվայ ընթացքում ընթերցարանը ունեցել է 12,365 արժանի մէջիւր եկամուտ, և 8511 արժանի մէջիւր ծախք ու 160 բաժանորդներ:

Ուղեւորների զվարճութիւնը, մայրաքաղաքի լրագիրների խօսքերով, որը վերջին տարիներս հոգս է տանում իրան պատկանած հողերը մշակելու մասին, վճուել է հիմնել Կովկասում, Աբստրուսի կամ Բորժոմի մօտ, մի ֆէրմա՝ զեղային բոյսեր դարձացնելու նպատակով՝ զինուորական վարչութեան ղեկավարների ղեկաւորները մատակարարելու համար: Սկզբնական աշխատանքներն արդէն սկսված են:

Թիֆլիսի Բամոյեանց եկեղեցու երեցիոս պ. Մէլիք-Վարդապետեանը հրատարակել է այդ եկեղեցու հաշիւը 1893 թւի համար, որից երևում է, որ այդ տարին եկեղեցին ունեցել է արդեն 9876 ռուբլի 90 կ. հետեւել կերպով. անշարժ կալուածներից վարձ—6712 ռ. 70 կ., մատակարարութիւնից—769 ռ. 11 կ., տոկոս դրամադրութից—2304 ռ. 39 կ. այլ և այլ 90 ռ. 70 կ.: Ծախք եղել է 8362 ռ. 8 կ. հետեւել կերպով՝ ծառայողներին—680 ռ. 50 կ., երկու ուսումնարանների պահպանութեան—2940 ռ. 67 կ. արտահանում երկու ուսանող թոշակաւորների պահպանութեան—1980 ռ., քաղաքային և գանձարանի հարկ—416 ռ. 64 կ., կալուածների կրակի դէմ ապահովութեան—46 ռ. 20 կ., մոմի—401 ռ. 60 կ., Յորդանանի համար կամրջի ծախս—536 ռ., վեհապետի գալստեան առիթով—1000 ռ. փայտի—45 ռ. 40 կ. կարկաստան և այլ մանր բաներ—214 ռ. 47 կ. առ 1-ին յունվարի 1894 թւի եկեղեցին ունի 40,133 ռ. 47 կ. դրամ, որից 26,437 ռ. 73 կ. արժէթղթեր են դրված ի պահեստ արժուական բանկում, 12,000 ռ. արված է առևտրական բանկին տոկոսով, 1690 ռ. նոյն բանկում պահվում է ընթերցարանի հաշու և 5 ռ. 73 կ. երեցիոսանի մօտ: Յանկանում են, որ հրապարակով հաշիւ տալու դադարաւորը, որ իրաւորում է Բամոյեանց եկեղեցին, տարածվի մեր բոլոր եկեղեցիներում:

Տեղական ուսու լրագիրները հազորդում են, որ մին Ա. Ջալալով առաջարկութիւն է արել քաղաքային վարչութեանը՝ երկաթուղիներով լուսաւորել Թիֆլիս քաղաքը:

Իրգայի մօտ, սեփական կալուածքում, յունվարի 16-ին վախճանվեց ախաղաղիկ Ա. Միգրէն:

Գործ, որը յայտնի է իր մեծ գիտնական ճանապարհորդութիւններով Սերիւստ, Ֆերդանուս և անանապատութեան վերաբերեալ բազմաթիւ աշխատութիւններով:

Մեզ հաղորդում են թաւրիդից հետեւալը. «Յունվարի 16-ին, թաւրիդի Բերգաթաղի եկեղեցում, պատարագից յետոյ կարդացվեց կաթողիկոսական կոնդակը, որով Սուրբառ եպիսկոպոս Պարգեանց հաստատում է Արապատեանի հայոց առաջնորդը»:

Բէսարաբիայում գտնվում են ուսուց Սինոդի մի քանի կալուածքները: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ այդ կալուածքների տարեկան ամբողջ եկամուտը (մօտ 50 հազար ռուբլի) Սինոդը յատկացրել է այս տարի քսան նոր եկեղեցական ծխական դպրոցների հիմնելուն Բեսարաբիայի թեմում:

Ղզլարից, պ. Յարութիւն Մամաջանեան մի օրինակ «Մշակ» նախագիծ է Ղզլարի հայոց արական դպրոցին:

Քաղաքային գործերի վերաբերեալ ասեանք, ինչպէս լսել է «Тифлисский Листок» լրագիրը, յունվարի 31-ին կարգադրել է դումայի ձայնաւորների ընտրութիւններ կատարել Ախալքալա և Գօրի քաղաքներում ու Կօֆօր աւանում: Ընտրութիւնները պէտք է տեղի ունենան ներկայ տարվայ յունվարի 15-ին: Քաղաքներում և աւանում, որպէս յայտնի է, մտցնում է կրճատված քաղաքային ինքնավարութիւն:

ՄՕՍԿԱՅԻՅ մեզ գրում են. «Երեք համալսարանական հայ երիտասարդներ վճուել են Մոսկվայի Լեվիտանի յայտնի տպարանում հայկական բաժնի բանալ: Երիտասարդների այդ ցանկութիւնը գովելի է. մի այնպիսի կենսորոնում, ինչպէս Մոսկվան է, որը Թիֆլիսից յետոյ բունում է երկրորդ տեղը իր հայերէն հրատարակութիւններով, մի լաւ տպարան ունենալը խիստ ցանկալի է: Աւելորդ է ասել, որ այդ տպարանը մեծ ծառայութիւն կը մատուցանէ այն ոչ-փոքրաթիւ անձանց, որոնք, կամեալով այստեղ մի գիրք հրատարակել, ստիպված են լինում Թիֆլիս կամ Պետերբուրգ դիմելը»:

ՆԻՐՆԱՆԻ թեմական դպրոցի մի ուսուցիչ, Գեղամ Խաչատրեան, խնդրում է մեզ տպագրել հետեւալը. «Ձեր լրագրի № 9 մէջ Ներսիսից մի լուր է տպված, որը վերաբերում է Ներսիսի թեմական դպրանոցի աշակերտներին և մի քանի ուսուցիչներին ճանապարհորդութեանը դէպի Էջմիածին: Լրատուն գրում է, որ իբր թէ թեմական դպրանոցի աշակերտներին մի քանի ուսուցիչներին հետ միասին Էջմիածին ուղարկուող է դարանոցի տեսուչ պ. Մանգիւնեանը, և այդ պատճառով յարձակվում է պ. Մանգիւնեանի վրա, որ նա ուղարկել է աշակերտներին Էջմիածին, որոնք առանց կրթնախօշիկի, առանց վերաբրտի այն սաստիկ ցրտերին ստիպված են եղել 18 վերստ ճանապարհ գնալ ոտով: Հարկաւոր ենք համարում յայտնել, որ այդ ճիշդ չէ. պ. Մանգիւնեանը մինչև անգամ համաձայն չէր մեր աշակերտների ճանապարհորդութեանը, ասելով թէ այս ցրտերին շատ դժուար կը լինի գնալը: Մեզ դէպի Էջմիածին ուղարկուող եղել է ոչ թէ տեսուչ, այլ գնացողներ, այսինքն ուսուցիչների և աշակերտների սրտագին փախադրը»:

ԱՐՄԻՆԻՅԻՅ մեզ գրում են, յունվարի 27-ից. «Ամսի 9-ին կայացաւ սերիոզների ներկայացումը, և սպասածից աւելի աջողութիւն ունեցաւ: Մուտք եղաւ 115 ռուբլի, որից դուրս գալով ծախսերը, դուրս արդենք մնաց 70 ռուբլի: Այդ գումարից 40 ռուբլին յատկացնելով տեղիս ուսումնարաններին, մնացած մասը սերիոզների խումբը որոշեց տալ յօդուած թատրոնական Ֆօնդի, ի նկատի առնելով, որ մեր բնւոյ դեռ շատ թերութիւնների ունի և կարօտ է նորոգումների: Յատուկ շնորհակալութեան արժանի է տեղիս զբոսաշրջի հրամանատար իշխան Պալլէնովը, որը չը դադարէ ձրիապէս ուղարկել գիւնդարական նուագախումբ: Թատրոնը կատարելապէս լի էր բազմութեամբ»:

ԿՈՂԻՅԻՅ մեզ գրում են. «Մի քանի պատճառներով իր ժամանակին չը կարողանալով կատարել

րել Գրիգոր Արծրունու հոգեւանդանքը, յունվարի 15-ին, տեղիս ինտելիգենտ երիտասարդների և ուսումնարանական խմբի ներկայութեամբ հոգեւանդանք կատարվեց ա. Յարութեան եկեղեցում: Կողբում, ուր ուղում էր մտէր, լինի դա մի փոքրիկ խմբի ճաշ, հարսանք, կնուք, թաղում, առաջին բաժակ առնողը պիտի անպատճառ Գրիգոր Արծրունու անմուտայ յիշատակին նուիրի: Նրա անուան ժողովրդականութիւնը գնալով աճում է»:

ԲԱԳՈՒՅԻՅ մեզ գրում են յունվարի 25-ից. Յունվարի 22-ին տեղիս հասարակաց ժողովարանի զանգիւծում տեղի ունեցաւ Վրաց երեկոյթ՝ յօդուած տեղիս էմանազին ճաշարանի և վրացիների մէջ զբաղիւտութիւն տարածող ընկերութեան: Երեկոյթի ծրագիրը ըստ սովորականին բաղկացած էր մի քանի բաժանութիւններից՝ ներկայացումից, կենդանի պատկերներից, solo ու խմբական երգերից և պարերից: Անցեալ տարի համեմատաբար աւելի քան բազմակողմանի և յաջող էր երեկոյթը, իսկ այս տարի ընդհակառակը՝ թոյլ և անաջող: Իսկ մուտքի կողմից այս տարի շատ աւելի էր: Երեկոյթից դեռ մի քանի օր առաջ տոմսակները արդէն վաճառված էին: Չը նայելով նշանակած բարձր գներին՝ տոմսակները արժէին 2-ից մինչև 5 ռուբլի, դարձեալ ոչ մի տոմսակ չէր մնացել և այս առանց մի յորդանալի, առանց որ և է միջոցներ գործ դնելու կարգադրիչների կողմից: Հասարակութիւնն ինքն էր շտապել օր առաջ տոմսակներ ձեռք բերելու: Նոյն իսկ վերնայարկում ասեղ զցելու տեղ չէր մնացել: Եւ այս շատ հասկանալի է. անցեալ տարվայ Վրաց երեկոյթից անսպասելի զօրեղ տպաւորութիւն, միտքարիչ ներգործութիւն էր ունեցել: Այս տարվայ եկամուտը հաւանականաբար 2000 ռուբլուց անցած պիտի լինի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼԱԴՍՕՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԼՈՒՐԸ

Գլադստօնի հրաժարականի մասին տարածված լուրը իրարանցում է գցել թէ անգլիական մամուլը և թէ հասարակութեան մէջ: Ի միջի այլ պատճառների բերում էին և Գլադստօնի բժշկի, սըր Անդրիւ Կլէրկի (այժմ հանդուցեալ) կարծիքը, որը իբր թէ ստիպում էր Գլադստօնին, ի նկատի առնելով նրա դատաւանդ հասակը և հիւանդոտ դրութիւնը, հետաւել բաղադրական ասպարեղից և հանդիմանալով: Այդ լուրերը հերքելու համար Կլէրկ յանձնած է եղել անգլիական լրագիրներից մէկին մի յօդուած Գլադստօնի դրութեան մասին: «Daily News» լրագրի մէջ տպված են Կլէրկի ցուցմունքները: Ահա դրանք:

Եկատարելապէս սխալ է, գրում է Կլէրկ—որ իբր թէ ևս գրում էի Գլադստօնին հրաժարվել քաղաքական գործունեութիւնից: Գլադստօն մի դարմանալի ֆիզիկական և մտաւոր կարողութիւնների տէր մարդ է: Չը նայելով իր դատաւանդ հասակին, նա շատ կողմնորոշ պատանեկան թարմութիւն, ճկունութիւն և ոյժ է պահպանել: Բացի դրանից նա ընդունակ է զիշերը երկար և լաւ ջնքել, չը նայելով օրվայ ընթացքում ունեցած անարթութիւններին և յուզմունքներին: Գա մասնաւոր երկարատև սովորութեան հետեւանք է, մասնաւոր էլ ջղային սխտանայի դարմանալի հաւասարակշռութեան հետեւանք: Աշխատանքը և գործը ոչ թէ ուժագոյր են անում Գլադստօնին, այլ վերականգնանքում են նրան. աշխատութիւնը նրան երիտասարդ և ուժեղ է դարձնում»:

ՏԻՄՈՒԿՈՒՆԻ ԳՐԱԴՈՒՐԸ

Յրանսիական լրագիրների հազորած տեղեկութիւնների համաձայն, Ֆրանսիացիները գրաւեցին Աֆրիկայում Տիմուկտու քաղաքը, որը ամբողջ արևմտեան Աֆրիկայի արդիւնաբերական շարժման զլիւսուր կենտրոնն է համարվում: Նրա աղգաբնակութեան մեծ մասը կազմում են սողալայան նեգրները և պատերազմատէր արաբները, որոնք թաւաւում են Սահարա անապատի հարաւային մասում և անուանական կախումն ունեն միայն Մարոկոի սուլթանից: Տիմուկտու քաղաքը հիմնված է XIII-դ դարի սկզբում և առևտրի համար իր չափազանց ձեռնառու դրութեան պատճառով սկսեց արագ ծաղկել և զարգանալ: XVI-դ դարում նա դարձաւ մայրաքաղաք նեգր ցեղի զօրեղ պետու-

թեան, որը իշխում և հնազանդութեան մէջ էր պահում իր բոլոր հարեան ցեղերին: Նիգերա գետի հիւսիսային ափի վրա գտնվող Կարաւա քաղաքը ծառայում է որպէս նաւահանգիստ Տիմուկտուի համար, որը տեղացիները մինչև այժմ Ֆրանսիականութեամբ պաշտպանել են եւրոպացիներից, այնպէս որ եւրոպացիները չէին կարողանում որ և է յարաբերութիւն սկսել այդ երկրի ցեղերի հետ:

Սենեգալում Ֆրանսիացիների հաստատվելուց յետոյ շատ անգամ փորձեր են եղել մտնել երկրի խորքը մինչև Տիմուկտու և միայն վեց տարի առաջ Ֆրանսիացիները առաջին անգամ հասան մինչև Կարաւա: Գնդապետ Բօնիէի հրամանատարութեան տակ Ֆրանսիական այժմեան արաւանքին աջողվեց հասնել մինչև Տիմուկտու և գրաւել այդ նշանաւոր առևտրական կենտրոնը համարեա առանց որ և է ընդդիմադրութեան: Քաղաքը շատ աղքատ է ջրով, չը նայելով Նիգերա գետի մօտաւորութեանը, իսկ նրա բնակիչները մինչև այժմ ապրում են մեծ մասամբ յարեալ խրճիթներում:

ՆԱՍԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՅ

Ինչպէս, յունվարի 24-ին

Հայոց նորահաստատ օրիորդական վարժարանի աշակերտութիւնը, տղայոց դպրոցի աշակերտների հետ միասին, տարեմուտ գիշերը մի երեկոյթ տուեցին: Երեկոյթը գրաւել էր երկու սեռի հասարակութիւնը: Փոքրիկ աղջիկների և տղաների արտասանած ոտանավորները ու կարգացած պատմութիւնները հասարակութեան վրա լաւ տպաւորութիւն թողեցին: Մանուկները ներկայացրին և երկու փոքրիկ վոզովիներ ու կենդանի պատկերներ, և երգեցին տղային երգեր: Երեկոյթը վերջացաւ վեճակախաղով: Երեկոյթից յետոյ մանուկներին միւրք բաժանվեց:

Պարսկահայի համար շատ անբնական էր տեսնել աղջկայ բնւոյ դուրս գալը, կամ մարդկանց աչքին երևալը, բայց այժմ հետզհետեւ նա հաշտվում է այդ մտքի հետ: Ստիպել երեկոյթները բաւական զարկ են տալիս մեր հասարակութեանը թէ բարոյապէս և թէ մտաւորապէս:

Բայց ցամայն այն է, որ զանազան հանգամանքներ արդեւ են դառնում այսպիսի երեկոյթներ և հանդէսներ կազմելուն, որչափ էլ աշխատութիւն լինի գործողների կողմից: Ամենալիցաւորը դահլիճի պակասութիւնն է, որի համար շատ նեղութիւն են կրում նախաձեռնողները:

Թէ հողաբարձութիւնը և թէ ընթերցասէրների ու թատերասէրների ընկերութիւնները մտադրութիւն ունեն միացած ոյժով շինել մի սեփական մեծ շինութիւն, որ մի և նոյն ժամանակ ծառայի համ թատրոնին, համ դպրոցին և համ էլ ընթերցարանին: Գովելի միտք է այդ:

Երեկոյթից դուրս արդեւ ստացվեց մօտ 200 դրան, որը պէտք է ծառայէ երկուս աղքատ սաների զբօսի և դասական պիտոյքների հոգալուն:

Ծննդեան գիշերը մեր ուսուցիչը և մի երիտասարդ, չը նայելով սարսափելի եղանակին, «Աւետիս» ման եկան և բարեգործական նպատակով ժողովեցին մօտ 170 դրան:

Ամսի 5-ից սկսած եղանակները այնպէս սարսափելի փոփոխեցան, որ մօտ 1 1/2 արշին բարձրութեամբ ձիւն եկաւ և շատ վնասներ հասցրեց, կոտորելով նախնի և լիմօնի ծառեր: Մովը ալեկոծվեց և մի քանի առաքատաւոր նաւեր փչրվեցին: Լուր կայ, որ խեղդովել են շատ մարդիկ:

Մէկ ամսից աւելի կը լինի, որ Ռաշտից թէհրան տանող ճանապարհի վրա, Սիֆիրուք գետի մէջ գտել են մի դիակ: Յայտնվել է, որ նա ըստ պանվել և ջուրն է գցվել. սպանվող քրիստոնեայ է: Թէ ով է եղել այդ ճանապարհորդը և կամ ով և ինչու համար է սպանել, մինչև այժմ չէ պարզվել:

Ամսի 22-ին, գիշերը, թատերասէրների ընկերութիւնը տուեց մի ներկայացում: Խաղացին «Մեծ Ներսիս» և «Կարապարկա՝ պրինց» պիէսաները: Մուտքը 250 դրանից աւելի կարելի է հաշուել:

Ամսի 19-ին ընթերցարանի վարչութիւնը իբր երկու տարվայ գործունեութեան հաշիւը ներկայացրեց հասարակութեան:

Ա-

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լճագետն ուղիղված էր ստացվել, որ Պապանյան յոնվարի 29-ին գալու է Լճագետն։

—«Հավաքի» գործակալությունը Լճագետն հաղորդում է, որ այս օրերս կայացած միտինգում, անարկիստների արած սպառնալիքների պատճառով, օտարերկրացիները կրկնապատկեց իր ուսուցանանքի թիվը, որոնք պաշտպանում են օտար պետությունների դեմադրությունները։ Մի և նոյն ժամանակ խիստ հակադրված է նշանակված արտասահմանից եկող կառավարչի անձանց վրա։

—«Kurier Warszawski» լրագրին թե՛հանդիս հաղորդում է, որ պարսից Շահը, յիսուսի, մտադրություն ունի ձանապարհորդություն կատարել Եւրոպայում, բայց այս անգամ փոքր ավտոպոլ (ոչ աւելի 10 մարդու)։ Ձանապարհորդությունը կը սկսվի ապրիլի վերջին։ Շահը կանցնի Կովկասով և ի միջի այլոց, վարչապետում էս կը մնայ։

—Առում է, որ պալատական վերջին պարահանդեսում գերմանական վիլհելմ կայսրն ասել է պալատականներից մէկին, թէ ինքն կը ցանկանար այցելել Ամերիկա։ Մի և նոյն ժամանակ նա շատ զոլում էր Միացեալ-Նահանգները և առկայրեց, որ գերմանական ցեղի բոլոր ժողովուրդները պէտք միմեանց օգնեն։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍՏԱՅԻՆ ԳՐՈՒԹԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՐՈՒՐԳ, 31 յունվարի։ «Новое Время» լրագրից հաղորդում է, որ Տաուսուսական արդիւնաբերական ցուցահանդէսի բացումը Նիժնի-Նովոգորոդում տեղի կունենայ 1896 թվի յունվարի 15-ին, իսկ փակումը սեպտեմբերի 15-ին։ Ցուցահանդէսը բաղկացած կը լինի 21 բաժիններից, մտադրություն կայ առանձին էանագրաֆիական բաժին կապել։

ՊԵՏԵՐՐՈՒՐԳ, 1 փետրվարի։ Հրատարակված է առևտրի և ծովագնացության վերաբերեալ դաշնագրի նախագիծը Ռուսաստանի և Գերմանիայի միջև։ Կալուսական բանկերի ներկայացուցիչների համագումար ժողովը աւարտվեց։ Վճիռը սպասվում է ֆինանսների մինիստրից։ Լրագրիները հաղորդում, որ իբր թէ երկրագործություն մինիստրությունը կազմակերպություն նախագիծը հաւանություն է գտել պետական խորհրդի ընդհանուր ժողովի կողմից, ճիշդ է։ Նախագիծը կը քննվի փետրվարի 14-ին։

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ

Լճագետն վրա 10 ֆունտ արծե . . .	93 ր. 45 Կ.
Բերլին վրա 100 մարկ — . . .	45 ր. 70 Կ.
Պարիզի վրա 100 ֆրանկ — . . .	37 ր. 10 Կ.
Ոսկի — — — արծե . . .	7 ր. 48 Կ.
Մաքրային կուպոններ — . . .	149 ր. 75 Կ.
Արծաթ — — — — . . .	— ր. — Կ.
Բորսային դիվիդենդ — — . . .	5 ր. 7 Կ.
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . . .	103 ³ / ₈ Կ. — Կ.
— — — — 2-րդ — . . .	103 Կ. — Կ.
— — — — 3-րդ — . . .	102 ¹ / ₈ Կ. — Կ.
50/0 ոսկեայ ընտան	160 Կ. — Կ.
40/0 ոսկեայ փոխառություն	— Կ. — Կ.
Արևելյան 5/0 փոխառ. 1-ին շրջ. . .	— Կ. — Կ.
— — — — 2-րդ — . . .	102 ¹ / ₈ Կ. — Կ.
— — — — 3-րդ — . . .	102 ³ / ₈ Կ. — Կ.
— — — — 4-րդ — . . .	— Կ. — Կ.
Ներքին 50/0 առաջին փոխառութ. . .	242 Կ. 25 Կ.
— — — երկրորդ — . . .	226 Կ. 25 Կ.
Պետական երկաթուղային ընտան . . .	102 Կ. 75 Կ.
4 1/2 ընտան	— Կ. — Կ.
40/0 ներքին փոխառություն	95 Կ. 25 Կ.
50/0 դրամ. թղթ. արդ. կալ. բանկի 101 ³ / ₈ Կ. —	Կ. — Կ.
Այն. կալ. Պետ. բանկի խաղաղություն . . .	— Կ. — Կ.
Գրամ. թղթ.	190 Կ. 50 Կ.
4 1/2 0/0 վկայակ. դիւղ. հող. բանկի. 99 ³ / ₈ Կ. —	Կ. — Կ.
4 1/2 0/0 դրամական թղթեր կալուած. . .	— Կ. — Կ.
— — — փոխ. կրեդիտ. ընտեր. մտառ. . .	153 Կ. 50 Կ.
— — — — թղթադ.	101 Կ. 50 Կ.
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերություն օրվապայմաններ. . .	101 Կ. 50 Կ.
Մոսկվայի քաղաք. օրվապայմաններ. . .	101 ¹ / ₈ Կ. — Կ.
Օդեսայի	100 Կ. 75 Կ.
Թիֆլիսի	98 Կ. 25 Կ.
Գրամ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. 100 Կ. 75 Կ.	
— — — — Գրամայիսի — . . .	100 Կ. 75 Կ.

Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւն
ամսով է:

Ս. Պետերբուրգի բորսայի արամագրությունը ամուր է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴԵՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՍՄԱԼՅԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՂԱՔԱՅԻՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԲԺԺՇԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՍՑԵՆԵՐԸ

- 1 և 2 պոլիցիական մասեր՝ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ, Գոյովնիսկի պրոսպեկտ, № 5,
- 3, 4 և 5 մասեր՝ Կ. ՂՕՆԵԱՆ, Սաղաթայա փողոց, № 19:
- 6 մաս, Գ. ՏԵՐ ԱՍՍՏՈՐԵԱՆ, Վ. Երանցովսկայա հրապարակ, ա. Եղիշարովի:
- 7 մաս, Հալաբար, Մ. ԲԱԼԱՆԹԱՐԱՆ, Կախտինսկայա հրապարակ, ա. փոքրբովի:
- 8 և 9 մաս, Կուկիս, Կ. ԹԱՐԽԱՆԵԱՆ, Եղիշարովսկայա փող. ա. № 70.
- 10 մաս, ՐԷԽՏՁԱՄԷՐ, Եղիշարովսկայա փ., № 86. (№ 13).

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիս, Վ. Երանցովի արձանի հանդեպ)

Հիւանդներին ընդունում են առանց օր, բայց կիրակի օրերից։

ԱՌԱՐԾՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերաբերություններ և վնասեր (սիֆիլիս) հիւանդությունների։

Կ. Գ. ԶԻՆՈՎԱՆԻ—9—10 1/2 ժ. աչքի և նեարդային հիւանդություններ։

Գ. Գ. ԲՈՒԿԿՈՎԱՆԻ—10 1/2—11 1/2 ժ. ներքին, երկնային և կանաչ։

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻԺ—11 1/2—12 1/2 ժ. ականջի, կոկորդի, թիւի և կրծքի։

Կլինիկական ՏՈՒՐԿՈՎԻԺ—12 1/2—1 ժ. կանաչ։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ներքին և երկնային։

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝
Ա. Գ. ԳՐԻԿՈՎ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէջի ու սեռական օրգանների։

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—7—7 1/2 ժ.
Ի. Ե. ՖՐԱՆՅՈՒՄ—7—7 1/2 ականջի, կոկորդի և թիւի ու նեարդային։ Երկու-չորթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՐԻԿՈՎ քիմիական և խաղաղության հետազոտություններ է անում մէջի, խիւի, առանց, կաթի և այլն։
Վճար 50 Կ.։ Համախորհրդի (կոմիտեի) և օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցում ընդունվում են և ԳԻՆԵՐՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԳՆԵՐԸ։

Հիւանդանոցի վերահսուչ բժշկական ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ։ (№ 72)

Питательный напиток

Упаковка 100 г

Упаковка 200 г

Упаковка 500 г

Упаковка 1 кг

Упаковка 2 кг

Упаковка 5 кг

Упаковка 10 кг

Упаковка 20 кг

Упаковка 50 кг

Упаковка 100 кг

Упаковка 200 кг

Упаковка 500 кг

Упаковка 1 т

Упаковка 2 т

Упаковка 5 т

Упаковка 10 т

Упаковка 20 т

Упаковка 50 т

Упаковка 100 т

Упаковка 200 т

Упаковка 500 т

Упаковка 1000 т

Упаковка 100 г

Упаковка 200 г

Упаковка 500 г

Упаковка 1 кг

Упаковка 2 кг

Упаковка 5 кг

Упаковка 10 кг

Упаковка 20 кг

Упаковка 50 кг

Упаковка 100 кг

Упаковка 200 кг

Упаковка 500 кг

Упаковка 1 т

Упаковка 2 т

Упаковка 5 т

Упаковка 10 т

Упаковка 20 т

Упаковка 50 т

Упаковка 100 т

Упаковка 200 т

Упаковка 500 т

Упаковка 1000 т

Համաձայն 1893 թվի յունիսի 8-ին հրատարակված պանդոկային կանոնադրության § 34 յօդուածի, ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ ինքրում է այն անձանց, որոնք պահում են գարեջրատներ՝ տաք կերակրով և հոնտոնան նկուղներ (рейнсковый погребок), կահաւորած սենեակներ, արձարաններ և թէյարաններ՝ զանազանների և տաք կերակուրների փաճառումով, կոնգրեսների և շաքարահացի խանութների, ապրանքը տեղն ու տեղը սպասուկու համար, շնորհ բերել այս փետրվարի 4-ին, ուրբաթ օր, քաղաքային վարչությունն ասելով, որպէս զի իրանց մէջ բաժանեն 1894 թվին քաղաքային հասնելիք պանդոկային տուրքը իսկ այն անձանց, որոնք պահում են պանդոկներ, զինեաներ, բուֆետներ, հիւրանոցներ, ընտանոցներ և կաֆէ-ընտանոցներ, ճաշարաններ և խանութներ, քաղաքային վարչությունը, համաձայն նոյն պանդոկային կանոնադրության 33-րդ յօդուածի, ինքրում է որ 1) զինեաներ պահողները շնորհ բերին քաղաքային վարչության տուրք այն 1894 թվի փետրվարի 6-ին, կիրակի օրը։ 2) պանդոկապանները այն 1894 թվի փետրվարի 8-ին։ 3) բուֆետ, հիւրանոց, ընտանոց և կաֆէ-ընտանոց պահողները այն 1894 թվի փետրվարի 10-ին։ 4) ճաշարան պահողները այն 1894 թվի փետրվարի 12-ին, և 5) խան պահողները այն 1894 թվի փետրվարի 14-ին բաժանման յանձնաժողովի անդամներ ընտրելու համար, առաւօտեան 10 ժամին։ (№ 13)

ԿԱՆԵԹԻ ԱՅԳԵՏԵՐԵՐԻ
ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Յառուկ նպատակ ունենալով մատակարարել տեղական և ներքին Ռուսաստանի շուկաները քաղաքացիական կախիկի բնական զինքների արդիւններից, սկսում է իր գործողությունները այս ապրիլի փետրվարի 5-ից։ Արտահանությունը, մեծ քանակությամբ և փոքր քանակությամբ ծախելու կը կատարվի Թիֆլիս քաղաքում ընկերության պահեստներում և մագազիններում, որ գտնվում են՝ 1-Միխայլովսկայա փողոցի վրա, առանց Սիֆիլիսի։ 2-րդ, Երանցովսկայա փողոցի վրա, Թամաշիլի քարվանսարում։ (№ 13)

Կիրակի, փետրվարի 6-ին
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ
տեղի կունենայ
ՊԱՐԱԶԱՆԻ
ՅՈՒՆՈՑ ԿՈՎԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԱՆ
Տոմարների գինն է՝ 2 ր. 10 Կ. կարելի է ստանալ Թիֆլիս քաղաքային շվեյցարից, և Կոստանտնուպոլիսում մագազինում։ Սիրիայի է երեկոյան 9 ժամին (№ 12)

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՅԿԵՐՈՑԹ
Պետերբուրգի կայսերական համալսարանի գոյություն
75 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ
Տեղի կունենայ փետրվարի 8-ին, 3 1/2 ժամին Թիֆլիսի կրթօսկի դահլիճում։ Ճաշի գինն է (շամպանյով և այլ զինքներով, լիկերներով, պունչով, այլ և հաշիվով կրաժշտությունը, հեռագրիները և բոլոր մնացելը) 7 րուբլի։
Պետերբուրգի համալսարանի և այլ բարձրագույն դպրոցների նախկին ու պ. ուսանողները կարող են ստանալ տոմսներ 1) Ա. Ս. Ֆրեյդլից (Սալերնայա փողոց, ա. Կլիւարէվի և նահանգական դատարանում)։ 2) Ի. Ն. Միխայլովից (Գոյովնիսկի փողոց, № 2)։ 3) Վ. Ն. Բազուլովից (Սոլոյակ, տուն իշխան Երակ. Գրուզինսկի)։ 4) Ա. Յովհաննիսյանից (խմբագրություն «Արձագանք»)։ 5) Իշխան Վ. Ն. Չէրեզովից (Նովոպլաշտ. № 7)։ 6) Մ. Ի. Չէրնիկովից (1-ին կապիտանի գնդի խմբագրատուն)։ 7) «Кавказ»-ի խմբագրատունը։ 8) «Новое Оздоровіе» լրագրի խմբագրատունը։ 9) «Тифлисский Листок» լրագրի խմբագրատունը և 10) կենսական գրախմբատանոցում։ (№ 12)

ՄԵԾ ՎԱՋԱՌՈՒՄՆ
(Առանց սակարկության)
ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ ՄԻՆՁՆԻ ՄԵՐՏԻ 1-Ը
Երբ Գուրապոլիների մագազինում և պահեստում, Գլխավորայա փողոցի վրա, կալուածական բանկի տան մէջ և Սարաջիկի ու Ծովանովի տան մէջ, բախում է։
Ջան աղան ապրանքն ու կանանց և երկնային կատարի և յարդէ գլխարկներ 30 կոպէկից մինչև 1 ր., աղաւարդիկանց կատարի գլխարկներ 1 ր. 25 կոպէկից սկսած և աւելի թանգ, փուլերի 20 կոպէկով, կրաժիպաներ, ժապաւեններ, ծաղիկներ, զգեստների և գլխարկների համար գուգներ՝ արշինը 20 կոպէկով և աւելի թանգ, անձրեւակներ, հովանոցներ և ձեռնոցներ 20 կոպէկից, ժերսէ 1 րուբլուց սկսած և աւելի թանգ։ Եւ նոյնպէս մեծ ընտրություն մոզային և զալանտերէյի ուրիշ ապրանքների էման գներով, որի մէջ պատուելի հասարակությունը կը համոզվի՝ այցելելով մեր փաճառումն։ (№ 12)

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ
Մեծ պահանջը և ահագին հոգսը ՄԵՐ ՀՆԱՐԱՍ՝
ԾԱՂԱՅԻՆ ՕՂԵԿՈՒՆԻ
ԳԼԻՑԵՐԵԱՆ ՍԱՊՈՆԻ ՆԿԱՐԵՐՈՎ,
ԳԼԻՑԵՐԵԱՆ ՓՈՇԻ,
ԷԿՍՏՐԱԿՏ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՅԱՍՄԻԿԻ ԵՒ ՐԷՋԻԱՅԻ ԾԱՂԻԿՆԵՐԻՑ,
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԳԻԿԻ ԵՒ ԱՅԻՆ
ստիպում է մեզ հետ մրցողներին ՆԱԽԱԶՆԵԼ ոչ միայն անունները, բայց և մեր մանագրությունների արտաքին տեսքը, որպէս զի զրանով մրցողներն հասարակությունը և այդպիսով մեծացնեն իրանց արդիւնների փաճառումը. ահա այդ պատճառով ինքրում ենք պատուելի գնողներին մեր արդիւնները գնելու ժամանակ լուրջ ուշադրություն դարձնել ֆիրմայի և գործարանային մարկայի վրա։
БНКА БРОКАРЪ Н КЕ
БНКА
ВЪ МОСКВѢ
УЛ. УЛИЦА УТРЕШНЯЯ
1864 г. 1864 г.
(№ 8) 1. 15 2—8
ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.